

<< Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 10-րդ կետի (տնօրինվող տեղեկությունների ցանկը և դրանց տնօրինման կարգը) պահանջի վերաբերյալ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանը տնօրինում է ՀՀ Վայոց ձորի մարզպետի գործունեությանը, մարզպետի աշխատակազմի , մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի և ստորաբաժանումների, ինչպես նաև մարզային ենթակայությամբ գործող կրթական, մշակութային և առողջապահական կազմակերպությանունների գործունեությանը վերաբերող տեղեկություններին:

Նշված տեղեկությունները մշակվում են ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների կողմից և պահպանվում նույն ստորաբաժանումներում կամ քարտուղարության ընդհանուր բաժնում կամ համապատասխան պաշտոնատար անձի պաշտոնական փաստաթղթերում և “Mulberry” համակարգում:

Հրապարակման ենթակա տեղեկությունները տեղադրվում են նաև ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի պաշտոնական (vdzor.mtaes.am) կայքում: